Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գավառ **28.12.2022թ. ժամը 11.00**

Նիստը նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի 8 անդամներից 6-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին ՀՀ ազգային անվտանգության ծառայության Գեղարքունիքի մարզային վարչության պետ Արթուր Վարդանյանը, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ Արթուր Մկրտչյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ Գևորգ Գալստյանը, ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար Գևորգ Մխեյանը, «Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն Արտաշ Սարդարյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը և գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանը, մարզպետի խորհրդական Սասուն Սահակյանը, մարզպետի օգնականներ Մանանա Գալստյանը և Ջանիկ Բազեյանը, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները և մարզի համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարները:

Օրակարգում՝

1. 2022 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:
   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2022 թվականի գյուղատնտեսական աշխատանքների մասին:
   /Զեկ. Մարտին Պետրոսյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2022 թվականին իրականացված սուբվենցիոն և անհետաձգելի ծրագրերի ընթացքի մասին:
   /Զեկ. Գևորգ Խաչատրյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պարտականությունները կատարող/

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների մասին:
/Զեկ. Կարեն Զազյան - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ/

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2022 թվականի ընթացքում գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վարձակալության տրամադրման գործընթացի մասին:
/Զեկ. Մարատ Ղուրշուդյան - մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի պետ/

6. Այլ հարցեր:

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) համայնքների վարչական ղեկավարների հետ աշխատանքները կազմակերպել այնպես, որ ապահովվի համայնքների 2022 թվականի սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ **/այսոհետ՝ Սեփական եկամուտներ/** ամբողջական հավաքագրումը և համայնքների 2023 թվականի բյուջեների **Սեփական եկամուտների** հավաքագրման համամասնություններով պահանջվող ցուցանիշները.

2) հանձնարարել համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարներին՝ վերահսկողություն իրականացնել բնակավայրերում տարբեր ծրագրերով իրականացվող շինարարական աշխատանքների նկատմամբ՝ դրանք ըստ նախագծերի և անթերի կատարելու համար.

3) համայնքների բնակավայրերում սուբվենցիոն ծրագրերի նախագծման փուլում ուսումնասիրություններին պարտադիր մասնակից դարձնել համայնքապետարանի համապատասխան ոլորտի ներկայացուցչին.

4) գույքագրել և քարտեզագրել համայնքների բնակավայրերի դեռևս չվարձակալած գյուղատնտեսական նշանակության հողերը, 2023 թվականի գարնանը հայտարարել մրցույթներ և պարտադիր ապահովել վարձակալների կողմից համապատասխան անասնագլխաքանակ ունենալու պայմանը.

5) ճշտել 2023 թվականին համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր վարձակալած, սակայն ոչ նպատակային օգտագործող, համապատասխան անասնագլխաքանակ չունեցող և ներդրումային ծրագրեր չներկայացրած վարձակալներին և սահմանված կարգով լուծել նրանց հետ կնքված վարձակալական պայմանագրերը.

6) համայնքապետարանների կողմից աշնանացանի ծլած ցանքերի վիճակի վերաբերյալ սահմանված կարգով իրականացվող մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան.

7) ուշադրության կենտրոնում պահել մարզով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում քաղաքաշինական գործունեության ու ճանապարհաշինության բնագավառում տիրող իրավիճակը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.06.2022թ N 362-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից այդ բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկման արդյունքում կազմված արձանագրություններին տալ համապատասխան ընթացք և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

X

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ